ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 2-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության և ուսանողության համար խոսեց Վեհափառ Հայրապետը, երանելի Ֆրանցիսկոսի սուրբ կյանքի մասին։

Վերջում հոգելից այս դասախոսության համար վեհափառ Հայրապետին խորին շնորհակալություն հայտնեց Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

* * *

Մարտի 3-ին, Առաքման կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 3-ին, Առաքման կիրակին, Երևանի Ս. Զորավոր եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պոզապալյանը «Շնորհեա և մեզ Տէր ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց» բնաբանով։

* * *

Մարտի 9-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, միաբանության և ուսանողության համար Վեհափառ Հայրապետը խոսեց հոգևոր առաքինության մասին և լավեց մեծ հետաքրքրությամբ։

* * *

Մարտի 10-ին, Անառակի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Քարոզեց Վեհափառ Հայրապետը Անառակ որդու առակի մասին։

* * *

Մարտի 16-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ ուսանողության ուժերով կազմակերպված գրական-գեղարվեստական երեկո։ Դ լսարանի ուսանող ուրարակիր Հրայր Գարավերդյանը ընթերցեց իր մեկ քարոզը՝ «Պայծառակերպությունը»։

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 17-ին, Տնտեսի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզեց Տնտեսի առակի մասին։

* * *

Մարտի 22-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Մոսկվայում հավատարմագրված օտար դիվանագիտական մարմինների ներկայացուցիչները դեսպանների գլխավորությամբ։ Հյուրերը եղան Մայր Տաճարում։ Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը նոր Վեհարանում ընդունեց դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներին։

* *
*

Մարտի 24-ին, Դատավորի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսպալյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս» բնաբանով։

Նույն օրը Երևանի Ս. Զորավոր եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը «Տէր, ուստ մեզ կալ յաղօթս» բնաբանով։

Նույն օրը Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Դատաւոր արդարութեան հաստատեցեր զմիտս մեր» բնաբանով։

* *
*

Մարտի 30-ին, շաբաթ, «Տօն է Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի սոսկալի շարչարանացն և մտին ի Վիրապն»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Յորմէ բխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազինս» շարականի խոսքերը բնաբան ունենալով։

Նույն օրը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը «Ցնծա այսօր, ցնծա և զուարճացիր եկեղեցի» բնաբանով։

* *
*

Մարտի 30-ին, շաբաթ, Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը քահանա ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի անցյալ տարվա շրջանավարտներից Արշակ սարկավագ Տերտերյանին, վերանվանելով նրան Տ. Գրիգոր քահանա։

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսպալյանը։

Նորընծա Տ. Գրիգոր քահանան ծնվել է 1936 թվականին Պարսկաստանում, ներգաղթել է 1947 թվականին և Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1956 թվականին։

* *
*

Մարտի 30-ին, շաբաթ, երեկոյան ժամը 6-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, դասախոսեց Արարատյան թեմի փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը էջմիածնի դպրոցի մասին։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *
*

Մարտի 31-ին, Գալստյան կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանը։

Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, քառասունքի հոգեհանգստյան արարողություն տեղի ունեցավ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հանգուցյալ երանաշնորհ Տ. Զարեհ Աթոռակալի հոգու հանգստյան համար։ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսեց հանգուցյալ Սրբազան Աթոռակալի մասին։

Սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողության ներկա էին երջանկահիշատակ հանգուցյալի հարազատները, որոնք հետ սուրբ պատարագի ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

* *
*

Մարտի 31-ին, Գալստյան կիրակին, Երևանի Ս. Զորավոր եկեղեցում, քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը, բնաբան ունենալով «Որ զխորհուրդ քո գաղտնեանդ յառաջագոյն գուշակեցեր» շարականի խոսքերը։

Նույն օրը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսպալյանը «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէր զմարգարէսն և քարկոծ առնէր զառաքեալսն առ նա, քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո» բնաբանով։